

ԵՊԲՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2015-2020

<p>Խնդրի ընկալումը և կարիքի գնահատումը</p> <p>Վերակառուցել ԲՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեությունը՝ հիմք ընդունելով Համալսարանի հավակնություններից բխող գիտական գործունեության նոր ռազմավարությունը և քաղաքականությունը</p>	<p>Պատասխանատու թիվ</p>	<p>Կատարման ժամկետը</p>	<p>Կատարման ընթացքը</p>
<p>Գործողությունների նկարագիր (ռազմավարության հիմնական դրույթները) Ռազմավարման փոփոխությունները պետք է հստակեցնեն հետազոտության դերը համալսարանի գործունեության մեջ և կրթական ծրագրերում ու ընթանան հետևյալ առաջնահերթ ուղղություններով՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Համալսարանի ընդհանուր բյուջեից գիտությանը հատկացվող մասնաբաժնի հստակ առանձնացում. 2015-2020 թթ. ընթացքում գիտությանը հատկացնելով բյուջեի առնվազն 5%-ը՝ չհաշվարկելով գրանտային ծրագրերը: 2. Գիտահետազոտական գերակա ուղղությունների ընտրություն՝ հիմքում դնելով համաշխարհային տրենդը, ՀՀ բժշկագիտության ոլորտի գերակայությունները, ամբիոնների մասնագիտական ներուժը, նյութատեխնիկական բազան, ելքը դեպի կիրառական բժշկություն: 3. Ուսումնական գործընթաց-հետազոտություն կապի ստեղծում: 4. Ստեղծել համալսարանի գերազանցության կենտրոնի կայացման նախադրյալներ՝ հիմքում դնելով ԳՀԿ-ի վերակառուցումը և նոր, ժամանակակից կենդանանոցի ստեղծումը: 5. Որպես հիմք ընդունել գիտության երիտասարդացումը, դրա կայուն հարաճող զարգացումը և սահուն սերնդափոխությունը: 6. Լրամշակել և մշակել հետազոտական գործունեության կանոնակարգեր և այլ իրավական ակտեր: 7. Գիտական միջավայրի ստեղծում և գիտության միջազգայնացում: 	<p>ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր, ԳԿԽ, Գիտության վարչություն, իրավաբանական բաժին</p>	<p>2015-2020</p>	<p>Ընթացքի մեջ է</p>

<p>Գործողություն 1. Վերանայել Համալսարանի՝ գիտությանը հատկացվող բյուջեն՝ այն հասցնելով առնվազն 5%-ի՝ չհաշվարկելով գրանտային ծրագրերը:</p> <p>Գործողությունների նկարագիր Վերանայել բուհի բյուջեից գիտական հետազոտություններին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները, դրանց բաշխումը, ինչպես նաև խթանել արտաքին ֆինանսական ռեսուրսների ձեռքբերումը:</p> <p>Քայլեր, մեթոդներ</p> <ul style="list-style-type: none"> • Մշակել հետազոտությանն ուղղված բուհի բյուջեից հատկացումների ավելացումն ապահովող մեխանիզմներ • Վերանորոգել և հնարավորությունների շրջանակներում ձեռք բերել լաբորատոր ժամանակակից սարքեր և ավելացնել հետազոտական գործունեության համար ծախսվող նյութերի ծավալները • Պետական ֆինանսական աջակցություն չունեցող ամբիոններում իրականացվող թեմաներին, ասպիրանտական և երիտասարդական հետազոտական ծրագրերին հատկացնել հաշվարկված չափաբաժիններ • Նպաստել համալսարանի բոլոր միավորների պետական մրցույթներին և այլ ֆինանսավորվող ծրագրերին դիմելիության բարձրացմանը • Ավելացնել հետազոտական գործունեության միջազգայնացմանն ուղղված ֆինանսական հատկացումները: • Տարեկան համաֆինանսավորման և ֆինանսավորման սկզբունքներով հատկացնել համապատասխան գումար երիտասարդ գիտնականների (նաև ուսանողներին) գործուղումներին և գիտական նախագծերին • Ֆինանսապես կամ նյութապես խրախուսել TR վարկանիշ ունեցող peer-review ամսագրերում տպագրվող աշխատակիցներին <p>Ռեսուրսներ՝ մարդկային և ֆինանսական</p> <p>Համալսարանի կառավարման խորհուրդ, ռեկտոր, հաշվապահություն, ԵՊԲՀ ռեսուրսները (գրասենյակ և աշխատակազմ), համալսարանի բյուջե, պետական և այլ դրամաշնորհներից ստացված ֆինանսական միջոցներ:</p> <p>Վերջնարդյունքներ</p> <p>Գիտական հետազոտությունների համար համալսարանի բյուջեում առանձնացված ֆինանսական միջոցներ:</p> <p>Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ</p> <p>Գիտությանը հատկացված ֆինանսական միջոցների արդյունավետության գնահատում: Նոր ֆինանսավորման արդյունքի և ձեռքբերումների գնահատում</p>	<p>ԵՊԲՀ ռեկտոր, պրոռեկտոր, գլխավոր հաշվապահ, գիտության վարչություն</p>	<p>2015-2016թթ.</p>	<p>Ընթացքի մեջ է</p>
---	--	---------------------	--------------------------

<p>Գործողություն 2. Մշակել համալսարանի ռազմավարությունից բխող ԵՊԲՀ գիտական գերակա ուղղությունները:</p> <p>Գործողությունների նկարագիրը</p> <p>Գիտահետազոտական գերակա ուղղությունների ընտրություն՝ հիմքում դնելով համաշխարհային տրենդը, ՀՀ բժշկագիտության ոլորտի գերակայությունները, ամբիոնների մասնագիտական ներուժը, նյութատեխնիկական բազան, ելքը դեպի կիրառական բժշկություն:</p> <p>Պլանավորել դրանց կատարումը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի միջոցով:</p> <p>Քայլեր, մեթոդներ</p> <ul style="list-style-type: none"> • Մշակել գիտահետազոտական նոր ուղղություններ, հիմնել նոր հետազոտական խմբեր և վերաձևավորել լաբորատորիաներ՝ ըստ հաստատված գերակա ուղղությունների: • Ըստ գերակա ուղղությունների համախմբել ԵՊԲՀ ամբիոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքները: • Հստակեցնել գիտական թեմաների հայտերի և հաշվետվությունների փաստաթղթային ձևակերպումները: <p>Ռեսուրսներ՝ մարդկային և ֆինանսական</p> <p>ԵՊԲՀ ռեսուրսները (գրասենյակ և աշխատակազմ), համալսարանի բյուջե, պետական և այլ դրամաշնորհներից ստացված ֆինանսական միջոցներ:</p> <p>Վերջնարդյունքներ</p> <p>Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հետազոտական ծրագրեր, հետազոտական նոր խմբեր, նախագծերի ներկայացման նոր ձևաչափեր, արդյունքների գնահատման չափանիշներ:</p> <p>Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ</p> <p>Գիտական հոդվածների, զեկույցների և համագործակցության պայմանագրերի թվաքանակի աճ, գիտական ծրագրերին երիտասարդների մասնակցության քանակական և որակական վերլուծություն:</p>	<p>ԵՊԲՀ ԳԿԽ, Գիտության գծով պրոռեկտոր գիտության վարչություն, ԳՀԿ</p>	<p>2015-2016թթ.</p>	<p>Ընթացքի մեջ է</p>
---	--	---------------------	--------------------------

<p>Գործողություն 3. Ապահովել հետազոտական և ուսումնական գործընթացների միջև կապը:</p> <p>Գործողությունների նկարագիր</p> <p>Մշակել հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցման մեխանիզմներ, հստակեցնել կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ներդրման մեթոդաբանությունը և գործիքները:</p> <p>Քայլեր, մեթոդներ</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտությունը դարձնել պարտադիր՝ ուսման տարիներին այն կրեդիտավորելով և/կամ գնահատելով, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան շնորհել, օրինակ, թեզի պաշտպանությունից հետո: • Դասախոսների ծանրաբեռնվածության հաշվարկի փոփոխություն՝ համակցելով ուսումնական (դասաժամ) ծանրաբեռնվածությունն ու գիտական/հետազոտական գործունեությունները, • Մշակել դասախոսների գիտական գործունեության գնահատման չափորոշիչներ /տեղական և միջազգային ակտիվության գնահատման համար/ • Վերափոխել դասախոսական կազմի ընտրությունների չափորոշիչները՝ հիմքում դնելով peer-review ինստիտուտը TR վարկանիշ ունեցող ամսագրերում տպագրությամբ 	<p>ԵՊԲՀ Ճյուղային պրոռեկտորներ, ԳԿԽ, գիտության վարչություն և ԳՀԿ, իրավաբանական բաժին</p>	<p>2015-2016թթ</p>	
<p>Գործողություն 4. Ստեղծել համալսարանի գերազանցության կենտրոնի կայացման նախադրյալներ՝ հիմքում դնելով ԳՀԿ-ի վերակառուցումը և նոր ժամանակակից կենդանանոցի ստեղծումը:</p> <p>Քայլեր, մեթոդներ</p> <ul style="list-style-type: none"> • նոր ժամանակակից կենդանանոցի ստեղծում • ԳՀԿ-ի վերակառուցում • Ճյուղային լաբորատորիաների և մոբիլ խմբերի ստեղծում • TR վարկանիշ ունեցող peer-review ամսագի ստեղծում <p>Գործողություն 5. Որպես հիմք ընդունել գիտության երիտասարդացումը, դրա կայուն հարաճող զարգացումը և սահուն սերնդափոխությունը:</p> <p>Քայլեր, մեթոդներ</p> <ul style="list-style-type: none"> • Բոլոր ֆինանսավորվող ծրագրերում երիտասարդ դասախոսների 		<p>2016-2020թթ</p>	<p>Ընթացքի մեջ է</p>

<p>մասնակցությունը դարձնել պարտադիր՝ հստակ սահմանված չափաբաժիններով</p> <ul style="list-style-type: none"> • Մշակել և իրականացնել երիտասարդական հետազոտական թեմաներ, • «Ուսանողական գիտական օր» հասկացության ներդրում և խրախուսում, • Բանավոր զեկուցմամբ մասնակցությունների ամբողջական ֆինանսավորումը <p>դարձնել պարտադիր:</p> <ul style="list-style-type: none"> • Կոնֆերանսների, սեմինարների բանավոր զեկուցմամբ երիտասարդ մասնակիցների համաֆինանսավորում՝ ընդհուպ մինչև լրիվ ֆինանսավորում 			
<p>Գործողություն 6. Հաստատել գործողները, լրամշակել և մշակել հետազոտական գործունեության կանոնակարգեր և այլ իրավական ակտեր:</p> <p>Գործողությունների նկարագիր</p> <p>Լրամշակել և մշակել հետազոտական գործունեության կանոնակարգեր և այլ իրավական ակտեր:</p> <p>Քայլեր, մեթոդներ</p> <ul style="list-style-type: none"> • Լրամշակել ԵՊԲՀ հետազոտական գործունեության զարգացման ռազմավարական նոր ծրագիրը: • Լրամշակել Գիտակոորդինացիոն խորհրդի և նրան կից գործող փորձագիտական հանձնաժողովների կանոնակարգերը: • Լրամշակել Գիտության վարչության, երիտասարդ գիտնականների խորհրդի և ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունները: • Վերահրատարակել գիտական գործունեության կազմակերպման ուղեցույցը: <p>Ռեսուրսներ՝ մարդկային և ֆինանսական</p> <p>ԵՊԲՀ ռեսուրսները (գրասենյակ և աշխատակազմ), համալսարանի բյուջեն, պետական և այլ դրամաշնորհներից ստացված ֆինանսական միջոցներ:</p> <p>Վերջնարդյունքներ</p> <p>Ռազմավարական նոր ծրագիր, կանոնակարգեր և այլ իրավական ակտեր:</p> <p>Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ</p> <p>Գիտական գործունեության ինքնավերլուծության արդյունքների համեմատական վերլուծություն:</p>	<p>ԵՊԲՀ պրոռեկտոր, գիտության վարչություն, միջազգային գործունեության և արտաքին կապերի բաժին</p>	<p>2015-2020թթ.</p>	<p>Ընթացքի մեջ է</p>

<p>Գործողություն 7. Գիտական միջավայրի ստեղծում և հետազոտական գործունեության միջազգայնացում:</p> <p>Գործողությունների նկարագիր Առանձնացված ֆինանսներ ուղղել համալսարանի դասախոսական կազմի միջազգային գիտական համագործակցության մեջ շարժունակությունը խթանող մեխանիզմներին:</p> <p>Քայլեր, մեթոդներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ «Ուսանողական գիտական օր» հասկացության ներդրում և խրախուսում ✓ անվանի գիտնականների՝ ԵՊԲՀ հրավիրելու գործընթացի ակտիվացում ✓ մասնագիտական կոնֆերանսների անցկացում ✓ միջազգային գիտաժողովներին մեր գիտնականների մասնակցությունը ✓ վերապատրաստումներին և փորձի փոխանակային ծրագրերին երիտասարդ գիտնականների մասնակցությունը ✓ մեր գիտնականների՝ ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հոդվածների տպագրությունը ✓ մոնոթեմատիկ սեմինարների, վեբինարների, բանավիճային ակումբների և այլ գիտական միջոցառումների նախաձեռնությունները ✓ համալսարանում կազմակերպված գիտական միջոցառումներին հրավիրված պրոֆեսորների և արտերկրի մեր գործընկերների մասնակցությունը: • Պլանավորել համագործակցություն մեր համալսարանի պարբերականների և արտերկրի պարբերականների խմբագրությունների միջև • Ֆինասավորել անդամակցությունը բժշկագիտական հրատարակիչներին, էլեկտրոնային ռեսուրսներին: • Մեծացնել միջազգային ծրագրերի նորությունների վերաբերյալ տեղեկատվության ծավալները: <p>Ռեսուրսներ՝ մարդկային և ֆինանսական ԵՊԲՀ ռեսուրսները (գրասենյակ և աշխատակազմ), համալսարանի բյուջեն, պետական և այլ դրամաշնորհներից ստացված ֆինանսական միջոցներ:</p> <p>Վերջնարդյունքներ Միջազգային համագործակցության թվաքանակի աճ, գործող համագործակցությունների ընդլայնում:</p> <p>Վերջնարդյունքների գնահատման ցուցիչներ Միջազգային նոր համագործակցությունների քանակական և որակական վերլուծություն:</p>	<p>ԵՊԲՀ պրոռեկտոր, գիտության վարչություն, միջազգային գործունեության և արտաքին կապերի բաժին</p>	<p>2015-2020թթ.</p>	<p>Ընթացքի մեջ է</p>
--	--	---------------------	----------------------